ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանուն՝** Անդրանիկ Մարգարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի ավագ մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վիեննա 2023 թվականի ապրիլի 24-ից մինչև մայիսի 5-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը՝** Վիեննայի միացյալ ինստիտուտ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Fiscal Frameworks (FF) / Հարկաբյուջետային շրջանակներ» թեմայով դասընթացին:

6. **Քննարկված թեմաները՝**

1. Հարկաբյուջետային շրջանակների կարևորությունը
2. Հարկաբյուջետային ինստիտուտների դերը"ընդհանուր ակնարկ
3. Հարկաբյուջետային վիճակագրության ծածկույթը
4. Հարկաբյուջետային պլանի իրականացում
5. Դեֆիցիտ և պրոցիկլայնության հակվածություն
6. Հարկաբյուջետային կանոնների ձևավորում
7. Հարկաբյուջետային կանոններ" հարկաբյուջետային խորհուրդների (Fiscal council) նշանակությունը
8. Հարկաբյուջետային շրջանակները ռեսուրսներով հարուստ երկրներում
9. Հարկաբյուջետային ռիսկներ" պայմանական պարտավորությունների կառավարում
10. Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքակնությունների կոորդինացում
11. Հարկաբյուջետային թափանցիկություն
12. Հարկաբյուջետային կայունություն և պարտքի կառավարում
13. Ինչպես մշակել Հարկաբյուջետային քաղաքականության փաթեթ
14. Միջնաժամկետ բյուջետային շրջանակներ

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

- Հանդես եմ եկել ելույթով (շնորհանդեսով) և դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության

հարկաբյուջետային շրջանակը, ինչպես նաև հարկային ծախսային պարտքային բաղադրիչների շարժընթացի վերլուծությունը և կանխատեսումները:

- Կատարել եմ խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքների ներկայացում դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակներում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացից ստացված գիտելիքները և տրամադրված գործիքները կկիրառվեն մակրոտնտեսական քաղաքականության վարչության կողմից իրականացվող աշխատանքներում, մասնավորապես՝ տնտեսական ցիկլերի ազդեցությունը հաշվի առնող կառուցվածքային բյուջետային հաշվեկշռի հաշվարկման, մակրոտնտեսական հիմնարարների ազդեցությունները ներառող հարկաբյուջետային շրջանակների կազմման, հարկաբյուջետային կանոնների մշակման, պարտքային կայունության վերլուծության, հարկաբյուջետային կատարողականի մշտադիտարկման ինչպես նաև Միջնաժամկետ ծախսային ծրագրի կազմման աշխատանքներու

10. Գործուղվող՝

Մակրոտնտեսական քաղաքականության
վարչության հարկաբյուջետային և
դրամավարկային քաղաքականությունների
կոորդինացման բաժնի ավագ մասնագետ Անդրանիկ Մարգարյան

08.05.2023թ.